

# Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

## ԱՄՍՕՐԵԱՅ ԼՈՒՐԵՐ

Անցեալ Սեպտեմբեր ամսուան ընթացքին Ս. Աթոռոյ Տճօրէն ժողովը ի նրա տ գումարուեցաւ իրի վարչական մարմին եօթն անգամ, իսկ իրի Կրօնական Առեւտրական երկու անգամ, նոյնպէս Առումնական Խորհուրդը մէկ անգամ, իւրաքանչիւրը զրազելով իր իրաւասութեան մէջ եղած խնդիրներով:

● Շր. 1 Սեպտ. — Տ. Տիրան Վրդ. Ամման մեկնեցաւ հոգեւոր և կրթական պաշտօնով:

● Կիր. 2 Սեպտ. — Վերադարձան յաջորդող կիրակիին, ըստ աւանդական սովորութեան տեսչական հանդիսաւոր պատարագ մատուցուեցաւ Ս. Յարութեան մեր վերնամասն երաշխաւոր Ս. Աստուածածին Սեղանին վրայ. քարոզեց Տ. Տիրայր Վրդ. «Մատիցէ այլ ի խորութիւն սրտի իւրոյ և բարձր եղիցի Աստուած» (Սղմ. ԿԳ. Տ) քնարանին վրայ. ներկայացուց սիրաբ. ըստ հին իմաստութեան, որպէս կեղծոն մարդկային բոլոր կարողութեանց, և անոնց ճանաչումը որպէս իրական գնահատութիւն մարդուն բուն արժէքին որ ինքնին կը ցոյցնէ աստուածային մեծութիւնը:

● Կիր. 9 Սեպտ. — Տօն Գրիտ Գօտոյ, Ս. պատարագ մատուցուեցաւ Գեթսեմանիի Տաճարին մէջ՝ Ս. Կոյսի գերեզմանին վրայ. քարոզիչն էր Տ. Ասողիկ Վրդ., որ հաւատքը ներկայացուց որպէս հիմք մարդկային զօրձունեութեան և միակ միջոցը ըմբռնելու հոգեւոր իրականութիւններ:

● Ուրբ. 14 Սեպտ. — Տ. Սիօն Վրդ. Հայֆա մեկնեցաւ հոգեւոր այցելութեան և տեղւոյն կըրթական զօրձերը կարգադրելու պաշտօնով:

● Կիր. 16 Սեպտ. — Ս. պատարագ մատուցուեցաւ Ս. Յակոբայ Տաճարին մէջ. քարոզեց Տ. Կիրակի Վրդ., որ անդրադառնալով օրուան աւետարանին՝ բացատրեց հացերու հրաշքը և ցոյց տուաւ թէ Աստուած հոգածու է ոչ միայն մեր հոգեւոր այլ և նիւթական պէտքերուն, և թէ ներկայ անտեսական տագնապին և նիւթական անձկութեան պատճառը միտտելու է աւետարանին սկզբունքներէն խտտրելուն մէջ:

● Գշ. 18 Սեպտ. — Լիբանանի հայ կաթողիկէներու պատրիարքական փոխանորդ Գերդ. Նազիբն ընկերակցութեամբ Հ. Յակոբ Վրդ. Կիրակոսեանի՝ Պատրիարքարանս այցելեց և ընդունուեցաւ Լուսարարացի և Փոխանորդ Սըրբազաններէ: Իսկ կէսօրէ ետքը երկու Սըրբազանները վանուցս Աւագ Թարգման Տ. Հայրիկ Վրդ. ին հետ փոխ այցելութեան գացին Նազիբեան Գերապայժառնի:

● Ուրբ. 21 Սեպտ. — Զկնի առաւան ժամերգութեան՝ Միարանութիւնը թափօրով Գեթսեմանիի Աստուածածոր տաճարը իջաւ, ուր հրաշափառի արարողութիւնէն ետքը Ս. Կոյսի գե-

րեզմանին վրայ մատուցուեցաւ հանդիսաւոր Ս. պատարագ: Ժամադրան էր Տ. Մերսոպ Սըրբազան՝ որ յաւուր պատշաճի քարոզով մը ներկայացուց Ս. Կոյսին ծնունդը որպէս արշալոյսը մատակցութեան մեծ խորհուրդին և անոր ծնողաց օրինապահ և նախանձայնց ոգին որպէս ախար ծնողական պարտականութեան պիտակցութեան:

● Կիր. 23 Սեպտ. — Ս. պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան տաճարի մեր վերնամասն մէջ, ուր քարոզեց Տ. Սիօն Վրդ. բացատրելով թէ Աստուծոյ զազափա՛րն է մարդիկ իրենց նպատակին առաջնորդող միակ ճանապարհը և այդ նպատակը՝ ճշմարտութիւն և կեանք է, և ցուցուց Աստուած ըմբռնելու երկու միջոցները միայն և սիրաբ.:

● Ուրբ. 28 Սեպտ. — Պ. Շահան Պէրդէբեան հրաւիրուած ըլլալով Ս. Աթոռոյ Ընծայարանի և Ժառանգաւորացի ուսուցչութեան՝ Գահիրէէն քաղաքս ժամանեց ձեռնարկելու իր նոր պաշտօնին:

● Կիր. 30 Սեպտ. — Իւզլիբացի տօնին առթիւ հանդիսաւոր Ս. պատարագը մատուցուեցաւ Ս. Յակոբայ Մայր տաճարին մէջ. պատարագեց Տ. Մերսոպ Սըրբազան. ըլլալով նաև յիշատակի օրը Մեկգոնեան Գերգատանին՝ պատարագիչ Սըրբազանը պանծացուց Մեկգոնեան հարապաններու աննախընթաց բարեբարութիւնը շեշտելով թէ ազգային մեծ բարեբարի մասէն ետքը առաջին յիշատակի օրն է այս օր պիտի կատարուի առն տարի անխափան ըստ կարգադրութեան Տնօրէն ժողովոյ, ի նշան երախտագրութեան բարեբարին Ս. Աթոռոյ հանդէպ ունեցած սիրոյն, և մաղթանքներ բրաւ ի հանդիստ անոնց հոգիներուն: Պատարագէն վերջ կատարուեցաւ մասնաւոր հոգեհանգստեան պաշտօն:

— Երեկոյեան ալ Մայր տաճարին մէջ պաշտուեցաւ Իւզլիբացի թափօրին հանդիսաւոր արարողութիւնը՝ ի ներկայութեան պարեպաշտներու հոծ բազմութեան:

### Շ Ն ՈՐ Հ Ա Վ Ա Ս Ի Բ

Բարխղարեանի ազգային երէն Ազնուարդ Տօր. Հրանդ Համամեան, որ զանգամ առ իրենով ցոյց տուած էր իր նմանակներն հանդէպ Ս. Արոսոյ, պատկար զիբեաւ եւ կարեւոր ձեռագիրներու նախաձեռնով, այս անգամ եւս 500 Ժամնիի զամար մը դրկած է ի նպաստ Սիօնի բարգաւաճման: Ս. Պատրիարք Սըրբ օրհնութեան կոնգրակ մը դրկեց ազնիւ նախաձեռնին, որոնք՝ վարչութիւն կը յայտնէ իր շնորհակալութիւնը:

### Վ Ա Ր Զ ՈՒ Թ Ի Ն « Ս Ի Ո Ն » Ի

### Ն ՈՒ Ի Ր Ա Տ ՈՒ ՈՒ Թ Ի Ի Ն

Շնորհակալութեամբ քնդուեցաւ եմ Աստրէն՝ Բարեպաշտնի Սյւրի Տիկ. Բերկունի Գ. Երանուեանէ 25 տար՝ յակագուելու նամար Ս. Յարութեան տաճարի նորոգութեանց: